

# «ԳԻՐՔ ԹՂԹՈՅ»-Ն ՈՒ ՄՅԻՆԵԹԱՅԻ ԽԱՉԸ

Տ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ճարտարապետ

Վրաստանի Մցխեթա բնակավայրի դիմաց, այն բլուրի վրա, որտեղ այժմ գտնվում է հնադարյան Ջվարի տաճարը, Վրաստանի քրիստոնեություն ընդունելու ժամանակներից կանգնած է եղել այդ հավատի սիմվոլը հանդիսացող մի խաչ: Ահա այդ խաչի պատմությանն է նվիրված մեր պատմահայր Մովսես Խորենացու պատմվածքից ստորև բերվող հատվածը: «Մի կին, Նունե անունով, սուրբ Հռիփսիմյանների ցրված ընկերներից, փախչում, հասնում է վրաց աշխարհը, Մցխիթա, որ նրանց նախագահ քաղաքն է: Խիստ ճգնություններով նա բժշկության շնորհք ստացավ, որով շատ ախտավորներ բժշկեց, մինչև իսկ Միհրանի՝ վրաց առաջնորդի կնոջը: Այս առիթով Միհրանը նրան հարցրեց, թե ի՞նչ վրությանմբ այդ սքանչելիքները գործում են և նրանից լսեց Քրիստոսի ավետարանի քարոզությունը, և լսածին ախորժելով, գովասանությանմբ պատմեց իր նախաբարներին: Շուտով նրան լուր հասավ այն սքանչելիքների մասին, որ Հայաստանում կատարվեցին թագավորի և նախարարների վրա, ինչպես և երանելի Նունեի ընկերների մասին: Այս բաների վրա հիացած՝ նա պատմեց երանելի Նունեին, որից և ավելի ստույգ կերպով և մանրամասն տեղեկացավ բոլոր բաներին»:

«...Արամապդի արձանը կործանելուց հետո (Նունեն) ասաց, թե պետք է երկըր-

պագել Քրիստոսի խաչի նշանին: (Խաչ) շինեցին, կանգնեցին վայելուչ բլուրի վրա, քաղաքի արևելյան կողմը, որ նույնպես բաժանված էր փոքրագույն գետով: Առավոտը բոլոր բազմությունը նրան երկրպագեց, դարձյալ ամեն մեկն իր տան տանիքից»: Սկզբնական խաչի փայտաշեն լինելու մասին խոսելուց հետո պատմահայրը շարունակում է՝ «Իսկ երանելի Նունեն այնտեղից գնաց, որ Վրաստանի մյուս գավառներն էլ քարոզի... նա առաքելուհի դարձած քարոզեց Կղարջքից սկսած, Ալանաց և Կասբից դռների մոտով մինչև Մաքսութների սահմանները, ինչպես քեզ պատմում է Ագաթանգեղոսը»:

Մցխեթայի խաչի կանգնման պատմությունը պահպանվել է վրացական տարեգրություններում «Եվ այդ երկնային հրաշքներով գովաբանված Մցխեթայի սուրբ Խաչը մենք, մարդկային ձեռքերով բարձրացրինք և եկանք այն ժայռի տակ գտնվող աղբյուրի մոտ... և մյուս օրը բարձրացանք այն ժայռի վրա...: Եվ սուրբ Նունեն ձեռքը դրեց մի քարի... և նրա վրա կանգնեցինք այն արքայական վեհության խաչը»:

Ավանդությունը նշում է, որ հավատացյալների մոտ մեծ համբավ ունեցող այդ խաչը այդտեղ կանգնել է թագավոր Միհրանը:

Հետագայում Մցխեթայի խաչի վրա, կամ նրա տեղում կառուցվում են երկու՝ Խաչի փոքր և Խաչի մեծ եկեղեցիները:

Վրաստանի հին ճարտարապետության պատմությանը պրազվող գիտնականները Մցխեթայի խաչի եկեղեցիներին, որպես վրացական արվեստի հուշարձաններ, տալիս են «առանցքային և վրձնական» նշանակություն, ստեղծում նրանց նվիրված մենագրություններ, որոնց մեջ իր ծավալով և նպատակադրվածությամբ ուրույն տեղ է գրավում Գ. Ն. Չուբինաշվիլու «Զվարիի տիպի հուշարձաններ» երկհատոր աշխատությունը լույս տեսած Թբիլիսիում 1948 թվականին:

Անկախ նրանից, որ այս եկեղեցիների կառուցման ժամանակը որոշ գիտնականներ (Գ. Չուբինաշվիլի և ուրիշներ) համարում են հայտնի, վերջնականապես ճշգրտված իրենց կողմից, սակայն իրականում պատմական տեղեկությունները խիստ հակասական են և կարիք ունեն հանգամանակից քննության:

Նկատի ունենալով, որ Չուբինաշվիլու գրքում Մցխեթայի Խաչի եկեղեցիների ստույնափորությանը Վուզնթացաբար արժարծովել են նաև Հռիփսիմեի և մեր մի շարք հուշարձանների գեղարվեստական արժանիքների և կառուցման ժամանակի հետ կապված հարցեր, հետեվաբար Խաչի եկեղեցիների կառուցման ժամանակի որոշումը առաջնակարգ նշանակություն է ստանում նաև մեր միջնադարի ճարտարապետության ճշմարիտ պատմության ստեղծման համար:

Մցխեթայի խաչի եկեղեցիների կառուցման վերաբերյալ գրառումներ կան վրացական խրոնիկայում, այսպես՝ «Վրրաստանի դարձը» («Обращение Грүзін»): տարեգրքում, որ հրատարակել է պատմաբան Ե. Թաղաշվիլին, գրված է կուրապաղատ Գուարամը «հիմնադրեց Սուրբ խաչի եկեղեցին»:

XI դարի պատմաբան Ջիվանշերի մոտ կա այսպիսի մի լրացում «կենսատու խաչը մինչ այդ գտնվում էր բաց դաշտում, և Գուարամը Խաչի եկեղեցու

կառուցումը հասցրեց միայն մինչ Գոտկատեղ...»:

Այնուհետև «Վրաստանի դարձը» տարեգրքում շարունակվում է՝ «նրանից հետո իշխան էր Ստեփանոսը՝ նրա որդին, Դեմետրեի եղբայրը, և նա շարունակեց Խաչի եկեղեցու կառուցումը:

«Ջարթիս Յխովրեբան» այս կապակցությամբ ունի այսպիսի մի նշանակալից հավելում, որ Ստեփանոսը անհավատ էր և Աստուծոց չվախեցող, որ Սըրբապան Խաչի եկեղեցին կառուցում էր նրա եղբայր Դեմետրեն:

Հետագա հաղորդումներով՝ «Հետո իշխան էր Ադրներսեն...» ապա, «Սուրբ Խաչի եկեղեցին և Թբիլիսիի Սրոնն ավարտեց Ադրներսեն, Վրաստանի մտավարը»: Համաձայն «Վրաստանի դարձի» նրանից հետո իշխան էր Ստեփանոսը (II-ը), Ադրներսեի որդին: Նա ավարտեց Խաչի եկեղեցին և Խաչի մոտ կարգեց միամսյա հավաք...», որպես քրիստոնեական տոն:

Մյուս խրոնիկաներում Վրաստանի իշխանների հաջորդականությունը տրվում է նույն ձևով, եթե չհաշվենք մի շատ կարևոր տարբերություն, այդ այն է, որ Բագրատունիների պատմաբան Դավթի որդի Սուբաթը Ադրներսեին համարում է նրա նախորդ իշխան Ստեփանոսի որդին, մինչդեռ ըստ «Ջարթիս Յխովրեբայի» Ադրներսեն Բակուր Գ-ր որդին է, Վախտանգի որդի վրացական թագավոր Դաչի ժառանգորդը:

Այս իշխանների ժամանակագրությունը առաջին անգամ մշակել է 18-րդ դարի վրացական ականավոր պատմաբան արքայազն Վախուշտին: Նա որոշել է, որ Գուարամը երկիրը ղեկավարել է 575—600, Ստեփանոսը՝ 600—619, Ադրներսեն՝ 619—639, Ստեփանոս երկրորդը 639—663 թվերի ընթացքում:

Ռուս գիտնական Ե. Ա. Պախոմովը դրամագիտության տվյալների հիման

վրա Ադրնեբսեհի կողմից Ստեփանոս առաջինին փոխարինելու տարեթիվը 619-ից տեղափոխում է 626 թվականը, իսկ մյուս թվականները՝ թողնում անփոփոխ, որպես ճշմարտություն:

Բանն այն է, որ ինչպես վրաց պատմագրությունը, այնպես էլ պատմության օտար աղբյուրները այս իշխանների՝ կյուրապաղատ Գուարամի, էրիսթավներ Ստեփանոսի (I-ի) և Ադրնեբսեհի մասին պահպանել են միմյանցից տարբեր և նույնիսկ հակասական տեղեկություններ: Օրինակ Ստեփանոսի մասին «Ջարթլիս ցխովրեբայից» տեղեկանում ենք, որ երբ բուլղանդական կայսր Հերակլը մտնելով Վրաստան, պաշարել էր Թբիլիսին, Ստեփանոսը հավատարիմ մնալով պարսիկներին, ամեն օր պատերազմում էր հույների հետ և այդպիսի մարտերից մեկում սպանվում է: Այնուհետև Հերակլը կանչում է Վախթանգի որդի վրացական թագավոր Դաչի շառավիղ Բակուրի որդուն, որը էրիսթավ էր Վախթիայում և անունն էր Ադարնասե, նրան է հանձնում Թբիլիսին և նշանակում է Ջարթլի իշխող (ղեկավար):

Հերակլ կայսրը 627 թվականին հեռաբջելով իր երկրի պզալի մասը նվաճած պարսիկներին, վերականգնեց իր տիրապետության նախկին սահմանները: Կայսեր Վրաստանում գտնվելու ժամանակամիջոցը գիտնական Ներսես Ակինյանը հիմնվելով Սեբեոսի վրա համարում է 624—630 թվականները:

Հենց այս դեպքերը նկատի ունենալով է, որ Պախտովը Ադրնեբսեհի էրիսթավ հռչակվելը 619-ից տեղափոխում է 626 թվականը: Ինչ վերաբերում է Գուարամին, ապա վրաց աղբյուրների և օտար տեղեկությունների միջև հակասությունն այնքան մեծ է, որ կարիք ունի շատ լուրջ քննության:

Հայտնի պատմաբան Ն. Ադոնցը իր

«Բագրատունիների փառքը» աշխատության մեջ բերում է ծննդաբանության Ֆիաղյուսակ.

Վախթանգ

- ↓
1. Դաչի
  2. Բակուր Բ
  3. Փարսման Ե
  4. Փարսման Զ
  5. Բակուր Գ
  - — — 6. Գուռամ Կիրապաղատ
  - — — 7. Ստեփան Ա.
  8. Ադրնեբսեհ 8. Ադրնեբսեհ
  9. Ստեփանոս Բ. 9. Ստեփան Բ.
  10. Միհր 10. Գուռամ Կիրապաղատ
  11. Արչիլ 11. Վարպ Բակուր
  12. Յոհան եւ Ջիւանշեր 12. Ներսեհ
  13. Աշոտ Կիրապաղատ
  14. Ատրնեբսեհ

«Ութերորդ և իններորդ անունները Ադրնեբսեհ և Ստեփան գտնվում են թե մեկ, թե մյուս գծի վրա»: Ադոնցը շարունակում է՝ «Ո՛րն է ճիշտը: Ադրնեբսեհ Բակուր Գ-ի որդի՞ն է, թե Ստեփանի: Ուրիշ խոսքով ո՞վ ումից է առել: Վախթանգի սերնդաբանության հեղինակը Լեոնտիոս եպիսկոպոսն է, մյուսինը՝ Սմբատը: Տարաբախտաբար սրանց հարաբերական հնությունը հայտնի չէ ստուգորեն: Լեոնտիոսի գործի հայ թարգմանության մեջ Գուռամ չի հիշվում: Ստեփանն— ընկնում է Թիֆլիսի պաշարման ժամանակ: Իսկ Ադրնեբսեհի մասին ասված է՝ «յազգէ Դաչէի», ուրեմն որդի Բակուր Գ-ի (որ ևս չի հիշվում, երևի մոռացված է):

«...Այս կետում Սմբատի և Լեոնտիոս եպիսկոպոսի մեջ ներքին կապ կա»:

«Լեոնտիոսի երեսուն թագավորները և Սմբատի նույն չափ թվով հրեա ծուկերը մինչև Գուռամ եղած են միևնույն մտավոր գործարանից...»:

«Գուռանը պատմական դեմք չէ, այլ երևակայության ծնունդ...» Կյուրապաղատ Գուարամի և Ստեփանոս Ա-ի վերաբերյալ պատմաբան Ն. Ակինյանը որոշ առումով տարբերվում է Ն. Աղոնցից:

Համաձայն վրաց տարեգրքի Գուարամը մահացել է 600 թ.՝ իսկ Ստեփանոսը երկիրը ղեկավարել է 600—619 թվականներին: Մինչդեռ այս իշխանների անունները չեն հիշատակվում հայոց աղբյուրներում (գիրք թղթոց և այլն), չեն հիշվում, համաձայն Ակինյանի՝ նաև օտար աղբյուրներում:

Ակինյանը ևս Գուարամի պատմական անձ լինելը համարում է հարցական: Նա Ստեփանոսի վերաբերյալ ևս Տարեգրքի տվյալները չի ընդունում և զբոսնում է, որ Ստեփանոսը պետք է մահացած լինի 600 թ. և որ նրան անմիջապես հաջորդել է Աղոններսեհը. այս դեպքում միայն համապատասխանություն կլինի օտար աղբյուրների հետ:

Որ Աղոններսեհը Բակուր Գ-ի որդին է և ոչ Ստեփանոսի, պնդում է նաև Ն. Ակինյանը: «Գրոց թղթոց մեջ 606—608 թ. իբրև առաջին նախարարներ կշահիվեն ի Վիրս Աղոններսեհ և Վահան և Բրզմիհր (էջ 133, 138, 169) կամ Աղոններսեհ և Աշուշան (էջ 170), Աղոններսեհ և Վահան եղբայրներ են (էջ 174): Թեև ոչ ժամանակավ, սակայն պատմության կողմանե համաձայն կուզա այս անձը Բակուրի որդվույն հետ: Տարեգիրք կվկայե, թե Բակուր պատանի զավակներ թողուց, և թե մին Աղոններսեհ եղավ ապա Մթավար. ետ Ստեփանոսի»:

Գ. Ն. Չուրինաշվիլին իր «Памятники типа Джвари» աշխատության ներածականում գրում է. В официальной переписке католикоса

Грузии Кириона и католикоса Армении Авраама, относящейся к 607—609 гг., переписке, которая предшествовала церковному разрыву обеих стран, упоминается и эта святаяня, при чем отмечается, что в церковь Креста Мухетского приходили не только грузины, но и армяне».

Որպես հիմք վերոհիշյալի հեղինակը վկայաբերում է հայկական «Գիրք թղթոց»-ը (Սահակ Մեսրոպեան մատենադարան Ե. Թ. 1901, էջեր 164, 173, 194), ինչպես նաև՝ Ուխտանես Պատմության բաժանման վրաց ի հայոց (Վաղարշապատ, 1871, էջեր 74, 89, 90, 130, 136):

Մեր ձեռքի տակ ունենալով նույն աղբյուրները, այստեղ բերում ենք Գ. Չուրինաշվիլու հիշած էջերից, ինչպես նաև այլ էջերից համապատասխան հատվածներ, միտք ունենալով պարզել, թե որքանով ճիշտ են բերվել և մեկնաբանվել հիշյալ աղբյուրները հետապոտողի աշխատության մեջ:

Ահավասիկ «Գիրք թղթոց»-ի 164 էջը — կարդում ենք՝

«Թուղթ առաջին Տեառն Աբրահամու հայոց կաթողիկոսի, առ Կիրիոն վրաց կաթողիկոս».

Նամակի տեստում հանդիպում ենք այսպիսի մի հատվածի

«Աստի ի Մցխիթայի ի Խաչն զալով. և այտի ի Սուրբ Կաթողիկէ:

Բառացիորեն ասվում է, որ այստեղից աղոթելու համար զայիս էին Մցխեթի Խաչը, և այդտեղից Սուրբ Կաթողիկէ:

Այս նախադասության մեջ չկա եկեղեցի բառը, ինչպես վերևում նշում է Չուրինաշվիլին: Այստեղ կա միայն Խաչը, և խաչ անվան տակ ոչ մի կերպ չի հասկացվում Խաչի եկեղեցի:

Ինչպես հայտնի է, բոլոր եկեղեցի-

ներում էլ խաչ է լինում, բայց հայոց կաթողիկոս Աբրահամի վերահիշյալ նամակի այստեղ բերված հատվածի երկրորդ մասում ասվում է, որ աղոթելու համար այդտեղից գալիս էին կաթողիկե, այսինքն՝ կաթողիկոսական եկեղեցի և ոչ նրանում գտնվող խաչը պաշտելու:

Ահա մի հատված ևս այդ նույն նամակից (164—165 էջերում)

«...պի մի՛ որ եկեսցէ աղաթել աստի ի սուրբ **Խաչդ**. և այտի ի սուրբ կաթուղիկէ»:

Այստեղ ևս բոլորովին նույն իրավիճակն է՝ ինչոր էր մեջբերված նախորդ հատվածում:

«Գիրք թղթոց»-ի 169-րդ էջում կարդում ենք՝

«Թուղթ Տեառն Սմբատայ՝ Վրկան մարպպանի առ Կիրիոն՝ վրաց կաթողիկոս»:

«...Ա՛յդ սուրբ վկայարան որ ի Յուրտավ, պատուական եկեղեցիդ հաստատեցավ, և պաշտանդ և կարգդ հայերէն ի ձեր միջի էր, և փոխելդ թշնամութիւն ի մեջ արկանէք. մանաւանդ թէ և թերութիւն, արգելու և մեզ աստ որք կամին գալ և երկրպագանել սրբոյ **Խաչիդ**, և ոչ տալ մտանել որք այտի գան ի սուրբ **կաթուղիկէ եկեղեցի**. և յալ վկայարանս յաղաթել»:

Այս նամակում ևս աղոթելու օբյեկտը հանդիսանում է **Խաչը**, և ոչ երբեք խաչի եկեղեցին: Անկախ այն բանից, որ կաթողիկե նշանակում է եկեղեցի, և այնուամենայնիվ այստեղ գրվել է «կաթուղիկէ **եկեղեցի**» հետևաբար աշտահայտության նույն ձևով պետք է լինենր «Խաչի եկեղեցի», եթե իսկապես այդպիսին լիներ:

Սմբատ մարպպանի նամակի վերջ բերված հատվածում մեծ պարզություն է մտցնում նաև «մտանել» բառը: Այսինքն՝ սուրբ կաթողիկե եկեղեցում աղո-

թելու համար նախ պետք է **մտնել** եկեղեցի, դռնով **ներս** մտնել, այսպիսի արտահայտության ամենահեռավոր նշույլ անգամ չկա, երբ խոսվում է սուրբ Խաչի մասին:

Այժմ մեջ բերենք հատվածներ վրաց կաթողիկոս Կիրիոնի պատասխաններից ուղղված հայոց կաթողիկոս Աբրահամին և Սմբատ մարպպանին.

171 էջում կարդում ենք՝

«...և երկրպագել պատուական և կենսատու սրբոյ **Խաչիս** Մծհիթայի...»:

«այլ մեք համենայն ժամ յաղաւթս յիջեմք առաջի սրբոյ **Խաչիս**...»:

«...և արժանի լինիջիք ի մատե աուրս գալ և երկրպագել սրբոյ **Խաչիս**»:

178 էջում կարդում ենք՝

«...և ի սուրբ **Խաչս** Մծխիթայի աղաւթել և աւրինաց հաղորդէին: Նոյնպէս և որ աստի այդր գային ի սուրբ **կաթուղիկէ** և յալ **եկեղեցիսդ աղաւթել**...»:

Ինչպես տեսնում ենք վրաց Կիրիոն կաթողիկոսը ևս Մցխեթի տվյալ սրբությունը անվանում է «**Խաչ**» և ոչ «Խաչի եկեղեցի»: մինչդեռ այնտեղից այստեղ աղոթքի եկողների համար կաթողիկեից բացի նշում է «**յալ եկեղեցիսդ**»:

Երբ հայոց կաթողիկոս Աբրահամին չի հաջողվում վրաց Կիրիոն կաթողիկոսի հետ հասնել հավատքի միաբանության, նա 608—609 թվականներին գրում է իր «Շրջագայականը» հայ հավատացյալներին և ահա «Գիրք թղթոց»-ի 194 էջում կարդում ենք՝

«Թուղթ շրջագայական Տեառն Աբրահամու հայոց կաթուղիկոսի»

«...մի՛ աղաւթիւք երթալով Ի **Խաչն** որ ի Մցխիթայի տեղաւքն համբաւի. մի՛ Մանղեսգաց **խաչն** և մի՛ ի մեր **եկեղեցիս** վնոսս ընդունել...»:

Աբրահամ կաթողիկոսը խոսելով խաչի մասին ասում է, որ նա հայտնի է Մցխեթի կողմերում, ու չի ասում, որ

գտնվում է խաչի հայտնի եկեղեցում-  
մինչ մեր սրբավայրերի մասին խոսելիս,  
այդպիսիք անվանում է «եկեղեցի»:

Երբ Ուխտանեսը գրում էր «պատ-  
մություն բաժանման վրաց և հայոց»-ը,  
իր ձեռքի տակ ուներ այն փաստաթղթի-  
րը, որոնք գրված են եղել 606—609  
թվականներին և հիմնականում ամփոփ-  
ված են «Գիրք թղթոց»-ում: Ուսումնա-  
սիրությունը ցույց է տալիս, որ Ուխտա-  
նեսը այս կամ այն չափով կրկնում է  
«Գիրք թղթոց»-ը և այնուամենայնիվ  
մենք այստեղ մեջ ենք բերում հիշյալ  
խնդրին վերաբերող մի հատված, նկատր  
առնելով, որ Գ. Չուրինաշվիլին հիշա-  
տակում է էջեր նաև Ուխտանեսից:

Գրքի 2-րդ հատվածի 90-րդ էջում  
կարդում ենք Կհիրիոնի պատասխանը՝  
«Եւ դարձյալ մեր Հարքն՝ ասե՛ և Վար-  
դայետի և ամենայն բնակիչք աշխար-  
հիս՝ յորժամ գային անդր՝ աղօթեին յ  
սուրբ եկեղեցիսդ, նոյնպես և ձերդ աստ  
գային առ սուրբ Խաչս Մցխիթայի՝ և  
աղօթեին...»:

Այսպիսով աներկբալորեն հասկա-  
ցում է, որ 606—609 թվականներին, այ-  
սինքն վրաց և հայոց եկեղեցիների բա-  
ժանմանը նախորդող շրջանում Մցխեթի  
աղոթատեղին եղել է Խաչ և ոչ Խաչի  
եկեղեցի, ինչպես ներկայացնում է Գ.  
Չուրինաշվիլին «Памятники типа  
Джвари» գրքում:

Ջավախովը, իր «История церков-  
ного разрыва между Грузией и  
Арменией в начале VII века» աշ-  
խատության մեջ նույնպես մեջբերում-  
ներ է անում «Գիրք թղթոցից», սակայն  
ռուսերենի թարգմանելիս երբեմն բնա-  
գրի նկատմամբ պատ է վարվում բաց  
թողնելով մեկ հետաքրքրող հարցի տե-  
սակետից շատ կարևոր հատվածներ:  
Օրինակ. բնագրում կարդում ենք «Ապատ  
մարդիկն, որ ի հայոց ի Վիրս խնամու-  
թիւն արարեալ էր, ի սրբոյ Շուշանկայ

պաշտավնն գային եւ ՚ի սուրբ Խաչս  
Մցխիթայի աղաւթել և արինաց հաղոր-  
դէին: Նոյնպես եւ որ աստի այդր գային  
՚ի սուրբ Կաթուղիկէ եւ յայլ եկեղեցիսդ  
աղաւթել...» և այլն, Ի. Ջավախովը  
թարգմանության մեջ բացակայում են  
այստեղ ընդգծված «Կաթուղիկէ» և  
«եկեղեցիսդ» բառերը և ստացվել է.

«Свободный люд из Армении  
вступавший в Грузию в брачные  
узы, приходил на богослужение  
(в память) св. Шушаники и по-  
молиться св. Михетскому Кресту  
и св. дарам причащался; точно  
также и те, которые или отсюда  
(из Грузии) к вам (в Армению)  
со спокойной совестью причаща-  
лись...» և այլն:

Ինչպես տեսնում ենք հայերեն բնա-  
գրում պարզ հասկացվում է, որ Մցխե-  
թայի սրբությունը, որին աղոթում էին,  
եղել է լուկ սբ. Խաչը (և ոչ եկեղեցի),  
իսկ Հայաստան եկողների համար աղօ-  
թելու սրբավայր են եղել Կաթուղիկեն  
և այլ եկեղեցիներ: Ահա և տեքստի այդ  
կարևոր կողմը չի ընկալվում ռուսերեն  
թարգմանությանը ծանոթանալիս և այն  
ամբողջովին ապակողմնորոշում է ըն-  
թերցողին:

Իր թեպը հավաստի ներկայացնելու  
նպատակով Գ. Չուրինաշվիլին վկայա-  
բերում է վերջերս Ցկիսի-ում հայտ-  
նաբերված 616—619 թվակիր կոթող,  
որի վրա քանդակված է Խաչ և այլ  
կանգնողի գիղը, որ «Воздвиг во  
имя креста Михетского».

Եվ ահա այստեղ ևս հեղինակը ինքնա-  
կամ «Խաչ» խոսքի տակ հասկանում է  
եկեղեցի. նա գրում է. «Вероятнее  
всего это нужно так понимать, что  
стелла воздвигнута во имя ближай-  
шей церкви, посвященной праздни-  
ку креста Михетского, что подтве-  
рждает то большое значение, кото-  
рое имела эта святыня в тогдашней  
Грузии».

բոլորովին անհիմն մեկնաբանություն:

Եթե ենթադրենք, որ արդեն կառուցված է եղել խաչի մեծ եկեղեցին՝ նա ինքն է դարձել սրբավայր և իր նշանակությամբ ստվեր է գցել նրանում պահպանված խաչին, հետևաբար կոթող կանգնողը այն թերևս խաչի եկեղեցուն նվիրեր և այդպես էլ գրեք, և բանի որ այն գրված է խաչին (և ոչ եկեղեցուն), միանգամայն բնական է երակացնելը, որ 616—619 թ.թ. խաչի մեծ եկեղեցին դեռևս գոյություն չի ունեցել:

Ինչպես երևում է Գ. Ն. Չուբինաշվիլին «Խաչ» խոսքի տակ ընդունում է «Խաչի եկեղեցի» գաղափարը՝ մի բան, որ չի կարող ընդունելի լինել, որովհետև ի սկզբանե գոյություն է ունեցել «Խաչի եկեղեցի» (վրացերենում — Ջվարիս — Սակղարի) արտահայտությունը, և ինչո՞ւ պիտի վլանային վերը բերված փաստաթղթերի հեղինակները գրել պարզ և լրիվ: Հետաքրքիր է նկատել, որ Ստեփանոսի բանդակի արձանագրության մեջ նույնպես սուրբը Խաչն է համարվում, ահավասի՛կ՝ «Крест Спасителя, помилюй Степано́за, патрикия Грузии»:

Մցխեթի խաչը երկար ժամանակ գոյություն է ունեցել և հետո է միայն կառուցվել Խաչի եկեղեցին: Արդ, եթե խոսք ասվելու լինի սուրբ Խաչի մասին նախքան եկեղեցու կառուցվելը, ի՞նչպես պիտի անվանվի այն, դարձյալ «սուրբ Խաչ», այսինքն այնպես, ինչպես որ գործ է ածվել իր ժամանակին, ինչպես այժմ գրվում է «խաչի» կանգնման պատմություններում՝ «Սուրբ Խաչ»: Հետևաբար, երբ «Ս. Խաչի» վրա կառուցվել է եկեղեցի, ճիշտ գաղափար ստանալու և նախորդ «սուրբ խաչ» արտահայտության հետ չջվորելու համար անհրաժեշտաբար պետք է ստեղծվեր լիակատար արտահայտություն «Խաչի եկեղեցի» և ոչ այլ կերպ, և այդպես էլ եղել է իրականում (տես վրացական խրոնիկաները), և այդպես էլ գրվում է հիմա, առանց բացառության, բոլոր հեղինակների, այդ թվում և Գ. Ն. Չուբինաշվիլու կողմից:

Այն բանից հետո, երբ Մցխեթի և Խաչի վրա կառուցվեց եկեղեցի, աստիճանաբար «Խաչին» վերագրվող սրբությունը անցնում է եկեղեցուն, մինչև այն աստիճան, որ ինչ-ինչ առիթներով ոչընչացած մարմարակերտ խաչը հետագայում չի վերականգնվում և «միանձնյա սրբությունը» համարվում է եկեղեցին: Ահա այս առիթով էլ «Խաչի» կարճ անվանումը ևս անցնում է եկեղեցուն կոչվելով «Ջվարի», որ վրացերենում նշանակում է «Խաչ»: Սակայն այս նոր արտահայտություն է և կապ չունի «Գիրք թղթոցի» ժամանակների հետ: Այս է պատճառը, որ որչա՞ռա շղիաստություններում եկեղեցին միաժամանակ անվանվում է երկու ձևով՝ հաճախ՝ «Խաչի եկեղեցի» և մերթ րնդ մերթ՝ «Խաչ» (Ջվարի):

Գ. Չուբինաշվիլին հիմնվելով վերահիշյալ աղբյուրների և դրամագիտության տվյալների վրա հնարավոր է համարում փոփոխել Վախուշտիի մշակած ժամանակագրությունը: Նա Գուարամին տեղափորում է 545—585/6 թվերի միջև, նրա որդի Ստեփանոսին 585/6—604/5 թվերի միջև, Ադրնեսեսին՝ 604/5—634/5 թվերի միջև սրան հաջորդել է իր որդի Ստեփանոսը (Ստեփանոս 2-րդը):

Իր այս նոր տվյալների հիման վրա էլ Գ. Չուբինաշվիլին Խաչի Փոքր եկեղեցու լրիվ կառուցումը վերագրում է Գուարամին, ժամանակը մինչև 586 թվականը: Խաչի Մեծ եկեղեցու կառուցումը վերագրում է Ստեփանոս 1-ին, ժամանակը՝ 590—604/5 թվականը: Ըստ հեղինակի, Ադրնեսեսին ևս Գուարամի որդին է — Ստեփանոսի և Դեմետրեի եղբայրը: Ի վերջո երակացնում է, որ Ադրնեսեսին Խաչի Մեծ եկեղեցու շինարարությունը մասնակցել է դեռևս Ստեփանոսի կենդանության օրոք՝ մինչև

604/5 թվականը, ոոպես կառավարիչնե-  
րի նույն ընտանիքի անդամ:

Ինչպես տեսանք, դրամագիտության  
հայտնի մասնագետ, Ե. Ա. Պախունովը  
դարձյալ դրամագիտության տվյալներով  
Ստեփանոս I-ի վերջին տարին համարում  
է ոչ 604/5, ոչ էլ Վախուշտիի որոշած  
619, այլ 626 թվականը, երբ կայսր Հե-  
րակը գրավելով Թբիլիսի քաղաքը կը-  
ռիփների ընթացքում սպանված Ստեփա-  
նոսի փոխարեն երկրի ղեկավար է նշա-  
նակում Կախեթիայի երիտթավ Ադրնեթ-  
սեհին, որը Բակուրի որդին էր:

Այս ամենը հնարավոր է դարձնում  
գալ երակացության, որ Մցխեթայի Խա-  
չի Փոքր եկեղեցին հիմնադրել է Գուա-  
րամը, շինարարությունը շարունակել և  
ավարտել է նրա որդին՝ Ստեփանոս  
I-ը: Այս ամենը ճշտորեն համապատաս-  
խանում է վրացական խրոնիկաներին:

Պատմաբան Սումբաթի մոտ կա տե-  
ղեկություն, որ կայսրը Բաղդադը գրա-  
վելուց, և հափշտակված սուրբ մասունք  
ները հետ խլելուց հետո Զարթի վերա-  
դարձավ 7-րդ տարում: Եվ ապա «Մին-  
չև նրա վերադարձը Թբիլիսի, Սիոնը  
բնակիչների կողմից ավարտվել էր և,  
միայն մի քիչ էր պակասում **Խաչի եկե-  
ղեցուն**»: Այս նույնը Գ. Չուբինաշվիլին  
բերում է իր գրքի 20-րդ էջում

Так  
еще описывая события конца 20-х  
годов VII века хронист (Сум-  
бат) отмечает, что «церковь  
Сиона в Тбилиси была окончена,  
а церкви Креста не доставало»:

Ինչպես նախնի է, Հերակը Թբիլի-  
սին գրավել է 626 (կամ 624) թվակա-  
նին, ուրեմն պարսկական արշավանք-  
ներից վերադարձել էր 631 թվականին,  
և այդ ժամանակ էլ Խաչի եկեղեցին  
դեռևս ավարտված չի եղել: Այս ևս հա-  
մապատասխանում է վրացական խրոնի-  
կայի տվյալներին: Պահպանված տե-  
ղեկություններով Խաչի եկեղեցին ա-  
վարտել է Ադրնեթսեհը, որը ապրել է

մինչև 639 (կամ 634/5, թերևս 645)  
թվականը:

Ադրնեթսեհի որդին՝ Ստեփանոս  
2-րդը համաձայն խրոնիկայի նույնպես  
մասնակցել է բուն Խաչի եկեղեցու շի-  
նարարությանը և ավարտել է այն, ապա-  
թե ոչ, նա իր քանդակը չէր ամրացնի  
եկեղեցու հարավային մուտքի վերևում:  
Այս Ստեփանոս 2-րդը համաձայն խրո-  
նիկայի, հորը՝ Ադրնեթսեհին փոխարինել  
է 639 (կամ 634/5) թվականներին և  
ապրել է մինչև 660-ական թվականնե-  
րը:

Մեր համոզմամբ, կայսր Հերակը,  
երբ երկրին տեր նշանակեց Ադրնեթսե-  
հին, իր պղեցությունը այդ երկրամա-  
տում ամրացնելու մտադրությամբ միջոց-  
ներ տրամադրեց Ադրնեթսեհին, որ նա  
եկեղեցիներ կառուցի Թբիլիսիում, ինչ-  
պես և Մցխեթայի հռչակավոր խաչի  
վրա: Սրանով միայն կարելի է բացատ-  
րել, որ պատմաբան Սումբաթը այդ եկե-  
ղեցիների շինարարության վիճակը հի-  
շում է հատկապես Հերակու Թբիլիսի  
վերադառնալու կապակցությամբ:

Ուրեմն, Մցխեթայի Խաչի մեծ եկե-  
ղեցու կառուցումը պիտի տևած լինի  
626 թվականից մինչև մոտավորապես  
640-ական թվականները, ընդամենը մե-  
կուկես-երկու տասնամյակ, որը միանգա-  
մայն նորմալ ժամանակամիջոց է այդպի-  
սի դժվար պայմաններում նման եկեղեցի  
կառուցելու համար:

Այսպիսով մեզ համար պարզվում է,  
որ Մցխեթայի Խաչի Մեծ եկեղեցին կա-  
ռուցվել է մեր Մրեհի եկեղեցու (639 —  
640 թ.թ.) հետ մոտավորապես նույն ժա-  
մանակներում և, ըստ երևույթին, նույն  
վարպետների կողմից: Դրանում համա-  
պում են ոչ միայն Մեծ եկեղեցուն պահ-  
պանված հայերեն արձանագրության  
մնացորդները, այլև նրա վրայի քանդակ-  
ները, որոնք, ինչպես տարբեր ժամա-  
նակներում նշել են որոշ գիտնականներ,

# Գ. Ի. ՄԵՆՊԵԼԵՆՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արմեն ՀՈՎՍԵՓՅԱՆ

## 1. Գիտության հսկան

Նևա գետի Վասիլեոստրովյան ափ-եզրը հնուց ի վեր համարվել է Պետերբուրգի, ապա՝ Լենինգրադի գիտական ու կուլտուրական կենտրոնը: Այստեղ է գտնվում նաև Լենինգրադի փառաբանված համալսարանը՝ որի այգու երկաթյա ցանկապատից ներս, առաջին հարկում տեղավորված իր բնակարանում, տասնամյակներ առաջ, ի թիվս ռուսական գիտության, կուլտուրայի բազմաթիվ գործիչների, հեղափոխական շարժման ականավոր դեմքերի, ապրել և ըստեղծագործել է ժամանակակից քիմիայի հիմնադիրներից մեկը՝ Գիմիտրի Իվանովիչ Մենդելեևը: Այստեղ, նրան ինչպես Լև Տոլստոյին Յանայա Պոլյանայում, այցելում էին հարյուրավոր մարդիկ, մեկը խորհուրդ ստանալու, մյուսը նրա պաշտպանությունը գտնելու, երրորդը պարպապես մտքեր փոխանակելու համար:

Գալիս էին ոչ միայն քիմիկոսներ: Նրա հյուրերի թվում էին կենսաբան Սեչենովն ու նկարիչ Կուինչին, երկրաբան Ինոստրանցևն ու սրետ Բյոլկը՝ հողագետ Դոկուչանն ու քննադատ Ստասուվը: Այստեղ էին գալիս ինժեներն ու գյուտարարը, հասարակական ու քաղաքա-

կան գործիչներ, պրոֆեսորն ու ուսանողը: Բոլորն էլ ճանաչված մարդիկ. մի խոսքով մայրաքաղաքի ինտելիգենցիայի էլիտան:

Թե տարբեր մասնագիտությունների, հայացքների ու կենսափորձի տեր այդ մարդկանց ինչով էր դեպի իրեն գրավում Մենդելեևը, կամ ինչպես էր ապրում ու ստեղծագործում այդ մեծ մարդը, այդ մասին շատ է գրված: Անհարկի կրկնությունից խուսափելու համար նշենք միայն մի բանի, մեր կարծիքով ոչ բոլորին հայտնի, շտրիխներ նրա կյանքից:

«Եթե առանց գիտության չի կարող գոյություն ունենալ արդյունաբերություն՝ ապա առանց վերջինիս չի կարող լինել ժամանակակից գիտություն»,-- Մենդելեևի այս խոսքերը կարելի է նրա ողջ կյանքի բնաբանը համարել: Եվ ահա, գիտության ու արդյունաբերության միջև կապ ստեղծելու հանգամանքներն էին, որ նրան դարձրին եռանդուն ճանապարհորդ: Նա շրջեց ողջ երկրագունդը քաղաքից-քաղաք, գործարանից-գործարան: Որտեղ մի նոր հանքավայր էր հայտնաբերվում, մեծ գիտնականն այնտեղ էր, ուր մի նոր գործարան էր շտր

այդ թվում Հ. Ստրժիգովսկին, Բ. Առաբելյանը, Մ. Սարգսյանը և ուրիշներ, ունեն շատ ընդհանուր կողմեր: Այդ բանդակների մանրամասների իրականացման մեջ, ինչպես մեկ երևում է, առկա է բոլորովին նույն ձեռագիրը:

Վրաց արվեստագետ Մ. Ա. ՉխիչվԱՉԵՆ, որ շատ մանրամասն հետազոտել է Մցխեթայի Խաչի եկեղեցիները դեռևս 1940 թվականին Մոսկվայում

հրատարակած իր «Архитектура Джвари» աշխատության մեջ (էջ 20) գրում է՝ «Таким образом.

Джвари в том виде, какой он имеет сейчас, нужно отнести к 40-м годам VII в.....»:

Այստեղից հետևում է, որ ավելի վաղ կառուցված Հոփսիմե և այդ տիպի մեր մյուս տաճարները «Ջվարիի տիպի» համարելը՝ առնվազն թյուրիմացություն է: